Corionis doctoris theol., Mambrei Lectoris, et Davidis invicti (saec. V.) opera. Insunt: 1) Corionis historia vitae et mortis Mesropi. II. Giut Cathol. epistola ad Davidem et Davidis responsio. III. Davidis 1) encomium sanctae crucis. 2) definitiones philosophicae. 3) omne malum puniendum esse. 4) apophthegmata quinque. 5) Porphyrii isagoge cum ejusdem explanatione. 6) Aristotelis categoriae cum explanatione earum. 7) Aristotelis liber de interpretatione cum ejusdem explanatione. 8) Explanatio analyticorum Aristotelis. 9) Aristotelis scripta de mundo et de virtutibus. arm. Venet. 1833. 8. 3 1/3 Rthlr.

Mémoire sur la vie et les ouvrages de David, philosophe Arménien du V. siècle de notre ère, et principalement sur ses traductions de quelques écrits d'Aristote, par C. F. Neumann. Paris 1829. 8.

Joannis Mandakunensis (saec. V.) sermones. arm. Venet. 1836. 8. 1860. 8. 1 1/3 Rthlr.

Joannis Odsniensis (saec. VIII.) philosophi opera. Insunt: 1) Joannis Odsn. orationes synodales, contra Paulicianos, contra Phantasticos etc. 2) Theodori Kerrthenavor (saec. VII.) oratio contra Joannem Mairagomensem haereticum, et encomia sanctae crucis et sanctae Virginis. 3) Isaaci Cathol. (saec. VII.) oratio in diem dominicam palmarum habita. arm. Venet. 1833. 8. $1^1/_3$ Rthlr.

Joannis Odsniensis oratio contra Phantasticos. arm. Venet. 1807. 8. $^1/_3$ Rthlr. arm. et lat. ibid. 1816. 8. $^1/_3$ Rthlr.

Ejusdem oratio synodalis et contra Paulicianos sermo. arm. et lat. ed. Jo. Bapt. Aucher. Venet. 1833. 8. 1 Rthlr.

Ejusdem opera. arm. et lat. ed. Jo. Bapt. Aucher Venet. 1834. 8.

Chosrovis Andsevatzensis (saec. X.) Commentarius in liturgiam Arm. Venet. 1869. 8°. 1 Rthlr.

Gregorii Narekensis (saec. X.) opera. Insunt: Ejusdem preces, encomia, cantica, et commentarius in Cant. Cant. arm. Venet. 1827. 8. $2^3/_4$ Rthlr. ed. nova. ibid. 1842. 8. $3^1/_3$ Rthlr.

Ejusdem preces arm. Venet. 1807. 12. $^3/_4$ Rthlr. ed. nova. ibid. 1833. 12. 1844. 24. $1^1/_3$ Rthlr.

Ejusdem preces cum commentario Gabr. Avetikhian. arm. Venet. 1827. 8. $3^1/_3$ Rthlr.

Ejusdem encomia et carmina cum comment. Gabr. Avetikhian. arm. ibid. 1827. 8. $1^1/_3$ Rthlr.

Ejusdem Commentarius in Canticum Canticorum. arm. Venet. 1789. 12. $^1/_2$ Rthlr.

Nersetis Clajensis (saec. XII.) preces viginti quatuor linguis editae. Venet. 1823. 12. 4 Rthlr. Ed. nova. ibid. 1837. 12. triginta sex linguis 1862. 69. $6^2/_3$ Rthlr.

Ejusdem epistola pastoralis arm. et lat. edita ab Jos. Cappelletti. Venet. 1829. 8. $1^1/_3$ Rthlr. Eadem lat. ibidem. 1829. 8. $^1/_2$ Rthlr. Eadem arm. ibidem. 1830. 8. $^2/_3$ Rthlr.

Ejusdem opera lat. versa ab Jos. Cappelletti. Venet. 1833. 2 Voll. 8. 4 Rthlr.

Ejusdem oratio synodalis et epistolae. Venet. 1848. 24°. 1 Rthlr.

Ejusdem opera poetica. Venet. 1830. 24°. 2 Rthlr.

Gregorii Teghà (saec. XII.) opera. Insunt 2 epp. dogm. de conciliatione ecclesiae Arm. cum Graeca. Venet. 1838. 24. 1 Rthlr

Nersetis Lambronensis (saec. XII.) oratio synodalis una cum 2 aliis orationibus. arm. Venet. 1784. 8. $^2/_3$ Rthlr.

Orazione sinodale di Nierses Lampronense recata in lin-

gua Italiana dall Armena, ed illustrata con annotazioni dal Pasquale Aucher. Venezia. 1812. 8. $^{2}/_{3}$ Rthlr.

Synodalrede des Nerses von Lampron, aus dem Armenischen übersetzt, mit Anmerkungen und einer Einleitung versehen von C. F. Neumann. Leipzig. 1834. 8.

Ejusdem oratio synodalis, epistolae et homiliae. Venet. 1838. 24. 1 Rthlr.

Ejusdem Commentarius in liturgiam Armen. Venet. 1837. 8°. $2^{5}/_{12}$ Rthlr.

Missale Armeniacum. arm. Romae. 1686. 2 Voll. fol. $83^{1}/_{3}$ Rthlr.

Breviarium Armeniacum. arm. Venet. 1845. 1860. 1 Rthlr.

Rituale Armeniacum. arm. Venet. 1831. 8. 4 Rthlr.

Pontificale Armeniacum. arm. Venet. 1833. 8. $^{2}/_{3}$ Rthlr.

Liturgia Armeniaca cum imaginibus. arm. Venet. 1823. 4. et ibid. eod. anno 8. $^{1}/_{2}$ Rthlr.

Liturgia Armena trasportata in Italiano per cura del Gabriele Avetikhian. con. rami. arm. ital. ibid. 1826. 8. et 1832. 1854. 8. $^{11}/_{12}$ Rthlr.

Vitae omnium Sanctorum Calendarii Armen. cum annotationibus Jo. Bapt. Aucher. arm. Venet 1810—14. 12 Voll. 8. 15 Rthlr.

Eaedem sine annotationibus. arm. ibid. fol. 10 Rthlr.

Dissertazione sopra la processione dello Spirito Santo dal Padre e dal Figliuolo opera del Gabr. Avetikhian. ital. Venezia. 1824. 8. $^{2}/_{3}$ Rthlr.

Commentarius in hymnos ecclesiae Armeniacae auctore Gabr. Avetikhian. arm. Venet. 1814. 4. $3^{1}/_{3}$ Rthlr.

Conciliatio ecclesiae Armenae cum Romana ex ipsis Armenorum patrum et doctorum testimoniis in duas partes, historialem et controversialem divisa auctore Clemente Galano. arm. lat. Romae. typis Congreg. de propag fide. 1650—61. 3 Voll. fol.

Bibliotheca selecta litteraturae Armenorum. arm. Venet. 1853—61. 22 Voll. 24°. $7^{1}/_{3}$ Rthlr.

Gregorii Magistri (saec. XI.) opera poetica. Venet. 1868. 24°. $^{5}/_{12}$ Rthlr.

IV. Versiones.*)

Labubniae al. Lerubnae (saec. I.?) Epistola regis Abgari s. historia conversionis Edessenorum. arm. Venet. 1868. 8°. $^2/_3$ Rthlr.

Idem liber gallice versus a L. Alischan. Venet. 1868. 8°. $^2/_3$ Rthlr.

Biblia sacra. arm. Venet. 1733. fol. $33^1/_3$ Rthlr.

Eadem cum lectionibus variantibus. arm. Venet. 1805. 4. et ibid. eod. anno. 4 Voll. 8. $6^2/_3$ Rthlr.

Eadem emendata ad fidem codd. 1 Voll. 1859. $7^2/_3$ Rthlr.

Psalmi arm. ibid. 1786. 8. 1 Rthlr. et 1820. 32. $^7/_{12}$ Rthlr. et 1822. 8. $^3/_4$ Rthlr.

Sapientia Salomonis. arm. graec. lat. Venet. 1824. 24. $^1/_3$ Rthlr.

Ecclesiaticus. arm. Venet. 1833. 1853. 24. $^1/_3$ Rthlr.

Novum Testamentum. arm. Venet. 1825. 47. 63. 8. $1^1/_6$ Rthlr.

Quatuor Evangelia. arm. Venet. 1816. 8. $^3/_4$ Rthlr.

Acta et Epistolae Apostolorum. arm. Ven. 1824. 12. $^3/_4$ Rthlr.

Obadias Armenus, quo cum analysi vocum Armenicarum grammaticâ, et collatione versionis Arm. cum fontibus, aliisque, maximam partem orientalibus versionibus, exhibetur primum in Germania specimen characterum Armenicorum ab Andrea Acolutho, arm. et lat. Lipsiae. 1680. 4.

Eusebii Pamphili Chronicorum canonum libri duo. Opus ex Haicano codice a doctore J. Zohrabo diligenter expressum et castigatum. Aug. Maius et J. Zohrabus nunc primum conjunctis curis latinitate donatum et notis illustratum, additis graecis reliquiis, ediderunt. lat. Mediolani. 1818. 4 maj.

Eusebii Pamphili Caesariensis episcopi Chronicon bipartitum, nunc primum ex armeniaco textu in latinum conversum, adnotationibus auctum, graecis fragmentis exornatum opera Jo. Bapt. Aucher. arm. graec. lat. Venet. 1818. 2 Voll. 4 maj. 10 Rthlr.

Philonis Judaei sermones tres hactenus inediti I et II de providentia et III de animalibus ex armena versione antiquissima ab ipso originali textu graeco ad verbum stricte exequuta, nunc primum in Latium fideliter translati per Jo. Bapt. Aucher. arm. et lat. Venet. 1822. 4 maj. $2^1/_3$ Rthlr.

---

*) Hac versiones omnes antiquo tempore et maximam partem saeculo quinto p. Chr. factae sunt.

Philonis Judaei paralipomena armena, libri videlicet quatuor in Genesin, libri duo in Exodum, sermo unus de Sampsone, alter de Jona, tertius de tribus angelis Abraamo apparentibus, opera hactenus inedita ex armena versione antiquissima ab ipso orig. textu graeco ad verbum stricte exequuta saeculo V. nunc primum in Latium fideliter translata per Jo. Bapt. Aucher. arm. et lat. Venetiis 1826. 4 maj. $6^2/_3$ Rthlr.

Joannis Chrysostomi homiliae in Evangelium Matthaei una cum fragmentis homiliarum in epp. S. Pauli arm. Venet. 1826. 3 Vol. 8 maj. $4^1/_4$ Rthlr.

Delectus homiliarum Jo. Chrysostomi. Venet. 1861. 8°. $4^1/_3$ Rthlr.

Jo. Chrysostomi Commentarius in epistolas S. Pauli. Venet. 1862. 2 Voll. 8°. $6^2/_3$ Rthlr.

Severiani sive Seberiani Gabalorum episcopi Emesensis homiliae nunc primum editae ex antiqua versione armenia in latinum sermonem translatae per Jo. Bapt. Aucher. arm. et lat. Venet. 1827. 8 maj. $2^2/_3$ Rthlr.

Idem liber sine versione lat. 1830. 8. $1^1/_3$ Rthlr.

Basilii Magni homiliae IX. in Hexaemeron. arm. Venet. 1830. 8 maj. $1^1/_3$ Rthlr.

Cyrilli Hierosolymitani Catecheses. arm. Viennae. 1832. 8.

Ephraem Syri opera. (paralipomena sc. armen.) Insunt I. ejus commentarii in Pemateuchum, libros Josuae, Judd. Regum et Chronicorum II. explanatio IV Evangeliorum synoptica, interpretatio Evangelii (sc. parabolicarum dictionum) atque sermones de margarita, de resurrectione et grano sinapis, nec non de dicto Ev. Jo. 3. 29. „qui sponsam habet, sponsus est". III. explanatio XIV. epp. S. Pauli (quibus adnumerantur ep. Corinth. ad S. Paulum ejusdemque epistola III. ad. Cor.) IV. sermones et preces. arm. Venet. 1836. 4 Voll. 8 maj. 8 Rthlr.

Commentarius (s. catena aurea) in Acta Apostolorum antiquo tempore collectus ex Jo. Chrysostomo et Ephraem Syro. arm. Venet. 1839. 8 maj. $2^2/_3$ Rthlr.

Historia Alexandri magni. Venet. 1842. 8°. 10 Rthlr.

Vitae patrum eremitarum. Venet. 1855. 2 Voll. 8°. $9^1/_3$ Rthlr.

Chronique de Michel le Grand, Patriarche des Syriens Jacobites trad. par Victor Langlois. Venise. 1848. fol. $5^6/_{12}$ Rthl.

V. Varia.

Mosis Chorenensis (saec. V.) praeparatio rhetorica sub titulo: „liber Chriarum" cum commentario edit. ab Jo. Zohrab. arm. Venet. 1796. 8. $1^1/_3$ Rthlr.

Explicatio ponderum et mensurarum Veterum sec. Epiphan., Mos. Chor., et Ananiam Schirakensem facta ab Jo. Bapt. Aucher. arm. Venet. 1821. 8 maj. 1 Rthlr.

Elegie sur la prise d'Edesse par les Musulmans, par Nersès Klaietsi, Patriarche d'Arménie, publiée pour la prémière fois en Armenien par J. Zohrab arm. Paris. 1828. 8. $1^2/_3$ Rthlr.

Ejusdem opera poetica arm. Venet. 1830. 24. $1^1/_2$ Rthlr.

Fabulae auctore Mechitar Gosch (saec. 12.) arm. Venet. 1790. $12^1/_3$ Rthlr. ed. 5 nova c. fabulis. Olymp. 1842. 54. $^5/_6$ Rthlr.

Choix de fables de Vartan (saec. XIII.) en Arménien et en Français. (par S. Martin.) Paris. 1825. 8 maj. $1^1/_6$ Rthlr.

Mechitaris Medici (saec. XII.) consolatio in febribus arm. Venet. 1832. 8 maj. 1 Rthlr.

Medicina practica auctore Mich. Resten. (tom. II. continet Lexicon medicum polyglotton.) arm. Venet. 1832. 2 Voll. 8. $3^1/_3$ Rthlr.

Descrizione e cura del Cholera Morbus, opera del Dr. Davide Mighirdician tradotta in Italiano. Venet. 1831. 8. $1^1/_3$ Rthlr.

Compendiose notizie sulla Congregazione de' Monaci Armeni Mechitaristi di Venezia, col ritratto del Fondatore, e la Veduta dell' Isola di S. Lazzaro. Arm. — Ital. 1819. 12. $^2/_3$ Rthlr.

Idem liber linguâ Anglicâ conscriptus ibid. 1825. 4. $^7/_{12}$ Rthlr.

Le Couvent de Saint-Lazare à Venise, ou histoire succincte de l'ordre des Méchitaristes Arméniens; suivie de renseignemens sur la langue, la littérature, l'histoire religieuse et la géographie de l'Arménie. par Eugène Boré. Paris 1837. 12. $^5/_6$ Rthlr.

Ex officina G. Hickethier.

CHRESTOMATHIA.

QUATUOR PRIMA CAPITA GENESEOS.

CAPUT I.

1. Ի սկզբանէ արար աստուած զերկին և զերկիր։
2. Եւ երկիր էր աներևոյթ և անպատրաստ. և խա-
ւար 'ի վերայ անդնդոց. և հոգի աստուծոյ շրջէր 'ի վե-
րայ ջուրց։ 3. Եւ ասաց ա՟ծ, եղիցի լոյս. և եղև՝ լոյս։
4. և ետես ա՟ծ զլոյսն զի բարի է։ և մեկնեաց ա՟ծ 'ի
մէջ լուսոյն և 'ի մէջ խաւարին։ 5. և կոչեաց ա՟ծ
զլոյսն տիւ, և զխաւարն կոչեաց գիշեր։ և եղև երեկոյ՝
և եղև վաղորդայն՝ օ՛ր մի։ 6. Եւ ասաց ա՟ծ. եղիցի
հաստատութիւն 'ի մէջ ջրոցդ, և եղիցի մեկնե՛լ 'ի մէջ
ջուրցդ և ջուրց. և եղև այնպէս։ 7. Եւ արար ա՟ծ
զհաստատութիւնն, և անջրպետեաց ա՟ծ 'ի մէջ ջրոյն որ
'ի ներքոյ հաստատութե՟ն, և 'ի մէջ ջրոյն որ 'ի վերոյ
հաստատութե՟ն։ 8. և կոչեաց ա՟ծ զհաստատութին եր-
կին. և ետես ա՟ծ զի բարի է։ և եղև երեկոյ, և եղև
վաղորդայն, օ՛ր երկրորդ։ 9. Եւ ասաց ա՟ծ. ժողովես-
ցի՛ն ջուրքդ որ 'ի ներքոյ երկնից 'ի ժողով մի, և եր-
ևեսցի ցամաքն. և եղև այնպէս։ և ժողովեցան ջուրքն,
որ 'ի ներքոյ երկնից 'ի ժողովս իւրեանց. և եր-
ևեցաւ ցամաքն։ 10. Եւ կոչեաց ա՟ծ զցամաքն եր-
կիր. և զժողովս ջուրցն կոչեաց ծովս. և ետես ա՟ծ զի

բարի է: 11. Եւ ասաց ա՟ծ. բղխեսցէ՛ երկիր բանջար
խոտոյ, սերմանել սերմն ըստ ազգի և ըստ նմանութե՟ն.
և ծառ պտղաբեր՝ առնել պտուղ ըստ ազգի իւրում, որոյ
սերմն իւր 'ի նմին ըստ ազգի 'ի նմանութե՟ի 'ի վ՟ր եր-
կրի. և եղև այնպէս: 12. Եւ եհան երկիր բանջար
խոտոյ, սերմանել սերմն որ է 'ի վ՟ր ա՟մ երկրի. և փայտ
պտղաբեր առնել պտուղ՝ որոյ սերմն իւր 'ի նմին ըստ
ազգի 'ի վերայ երկրի. և ետես ա՟ծ զի բարի է: 13. և
եղև երեկոյ, և եղև վաղորդայն, օ՛ր երրորդ: 14. Եւ
ասաց ա՟ծ՝ եղիցին լուսաւորք 'ի հաստատութե՟ն երկնից,
'ի լուսաւորութի՟ 'ի վ՟ր երկրի, և մեկնե՛լ 'ի մէջ տուըն-
ջեան և 'ի մէջ գիշերոյ. և եղիցին 'ի նշանս, և 'ի ժամա-
նակս, և յաւուրս, և 'ի տարիս: 15. և եղիցին 'ի լու-
սաւորութե՟ի 'ի հաստատութե՟ն երկնից ծագել յերկիր. և
եղև ա՛յնպէս: 16. Եւ արար ա՟ծ զերկուս լուսաւորսն
զմեծամեծս. զլուսաւորն մեծ յիշխանութե՟ի տուընջեան, և
զլուսաւորն փոքր յիշխանութե՟ի գիշերոյ, և զաստեղս:
17. և ե՛դ զնոսա ա՟ծ 'ի հաստատութե՟ն երկնից լուսա-
տո՛ւ լինել յերկիր: 18. և իշխել տուընջեան և գիշե-
րոյ, և մեկնել 'ի մէջ լուսոյն և 'ի մէջ խաւարին. և
ետես ա՟ծ զի բարի է: 19. և եղև երեկոյ, և եղև
վաղորդայն օ՛ր չորրորդ: 20. Եւ ասա՛ց ա՟ծ. հանցե՛ն
ջուրք զեռունս շնչոց կենդանեաց, և թռչունս թևաւո՛րս
'ի վ՟ր երկրի ըստ հաստատութե՟ն երկնից. և եղև այնպէս:
21. Եւ արա՛ր ա՟ծ կէտս մեծամեծս, և զա՟մ շունչ զեռա-
նոց կենդանեաց, զոր հանին ջուրք ըստ ազգի իւրեանց,
և զա՟մ թռչունս թևաւորս ըստ ազգի. և ետես ա՟ծ
զի բարի են: 22. Եւ օրհնեաց զնոսա ա՟ծ և ասէ. ա-

ճեցէ՛ք և բազմացարո՛ւք, և լցէ՛ք զջուրս որ 'ի ծովս.
և թռչունքդ բազմասցի՛ն 'ի վ՟ր երկրի: 23. և եղև
երեկոյ, և եղև վաղորդայն, օր հի՛նգերորդ: 24. Եւ
ասաց ա՟ծ. հանցէ՛ երկիր շունչ կենդանի ըստ ազգի չորքո-
տանի, և սողունս, և գազանս երկրի ըստ ազգի. և
եղև այնպէս: 25. Եւ արա՛ր ա՟ծ զգազանս երկրի ըստ
ազգի, և զանասո՛ւնս ըստ ազգի, և զա՟մ սողունս երկրի
ըստ ազգի իւրեանց. և ետես ա՟ծ զի բարի՛ են: 26. Եւ
ասաց ա՟ծ. արասցո՛ւք մարդ ըստ պատկերի մերում և ըստ
նմանութե՟. և իշխեսցեն ձկա՛նց ծովու, և թռչնոց երկնից,
և անասնոց, և ամենայն երկրի, և ամենայն սողնոց որ սողեն
'ի վերայ երկրի: 27. Եւ արա՛ր ա՟յ զմարդն 'ի պատ-
կեր իւր. ըստ պատկերի ա՟յ արար զնա. արու և էգ ա-
րար զնոսա: 28. Եւ օրհնեաց զն՟ս ա՟ծ՝ և ասէ. աճեցէ՛ք
և բազմացարո՛ւք՝ և լցէ՛ք զերկիր. և տիրեցէ՛ք դմա. և
իշխեցէ՛ք ձկանց ծովու, և թռչնոց երկնից, և ա՟մ ան-
ասնոց, և ա՟մ երկրի, և ա՟մ սողնոց որ սողեն 'ի վ՟ր եր-
կրի: 29. Եւ ասաց ա՟ծ. ահաւադիկ ետու ձեզ զա՟մ
խոտ սերմանելի՝ սերմանե՛լ սերմն ըստ ազգի և ըստ նմա-
նութե՟, որ է 'ի վերայ ա՟մ երկրի. և ա՟մ փայտ որ ունի-
ցի յինքեան պտուղ սերման սերմանելոյ, ձեզ լիցի 'ի
կերակուր: 30. և ա՟մ գազանաց երկրի. և ա՟մ թռչնոց
երկնից, և ա՟մ սողնոց որ սողեն 'ի վ՟ր երկրի որ ունիցի
շունչ կենդանի. և ա՟մ խոտ դալա՛ր 'ի կերակուր, և եղև
ա՛յնպէս: 31. Եւ ետես ա՟ծ զա՟մ զոր արար, և ահա
բարի՛ են յոյժ: և եղև երեկոյ, և եղև վաղորդայն, օր
վե՛ցերորդ:

CAPUT II.

1. Եւ կատարեցան երկի՛նք և երկիր և ա՟մ զարդ
ն՟ց: 2. և կատարեաց ա՟ծ յաւուրն վեցերորդի զա՟մ

զգործս իւր՝ զոր արար: Եւ հանգեաւ յաւուրն եւթներ-
որդի յա՟մ գործոց իւրոց՝ զոր արար: 3. Եւ օրհնեաց
ա՟ծ զօրն եւթներորդ, և սրբեաց զնա. զի 'ի նմա հան-
գեաւ յա՟մ գործոց իւրոց՝ զոր սկսաւ առնել ա՟ծ: 4. Այս
է գիր արարածոց երկնի և երկրի, յաւուր յորում արար
ա՟ծ զերկինս և զերկիր: 5. Եւ զա՟մ բանջար վայրի մինչ-
չեւ՛ լեալ էր 'ի վ՟ր երկրի, և զա՟մ խոտ վայրի մինչչեւ՛
բուսեալ էր, զի չեւ՛եւս էր տեղացեալ տ՟ն ա՟յ 'ի վ՟ր եր-
կրի. և մարդ չէ՛ր՝ որ գործէր զերկիր: 6. Բայց աղ-
բիւր ելանէր յերկրէ և ոռոգանէր զա՟մ երեսս երկրի:
7. Եւ ստեղծ տ՟ր ա՟ծ զմարդն հող յերկրէ. և փչեաց
յերեսս ն՟ր շո՛ւնչ կենդանի, և եղեւ մարդն յոգի կենդանի:
8. Եւ տնկեաց ա՟ծ զդրախտն յեդեմ ընդ արևելս, և
եդ անդ զմարդն զոր ստեղծ: 9. Եւ բուսոյց եւս տ՟ր
ա՟ծ յերկրէ զա՟մ ծառ գեղեցիկ 'ի տեսանել, և քաղցր
'ի կերակուր. և զծառն կենաց 'ի մէջ դրախտին, և
զծառն գիտելոյ զգիտութ՟ի բարւոյ և չարի: 10. Եւ
գե՛տ ելանէր յեդեմայ ոռոգանել զդրախտն. և անտի բա-
ժանի 'ի չո՛րս առաջս: 11. Անուն միումն փիսոն. Նա՛
է որ պատէ զա՟մ երկիրն եւիլատայ, ա՛նդ ուր ոսկին է.
12. և ոսկի երկրին այնորիկ ազնիւ. և անդ է սուտակն
և ակն դահանակ: 13. Եւ անուն գետոյն երկրորդի
գեհո՛ն. Նա՛ պատէ զա՟մ երկիրն եթովպացւոց: 14. Եւ
գետն երրորդ՝ տիգրիս, Նա՛ է որ երթայ յանդիման ասո-
րեստանի: Եւ գետն չորրորդ եփրա՛տէս: 15. Եւ ա՛ռ
տ՟ր ա՟ծ զմարդն զոր արար, և եդ զնա 'ի դրախտին փափ-
կութ՟ե գործե՛լ զնա և պահել: 16. Եւ պատուիրեաց տ՟ր
ա՟ծ ադամայ՝ և ասէ. յա՟մ ծառոց որ է 'ի դրախտիդ՝
ուտելով կերիցե՛ս: 17. բայց 'ի ծառոյն գիտութ՟ե
բարւոյ և չարի մի՛ ուտիցէք, զի յորում աւուր ուտիցէք

'ի նմանէ մահու մեռանիցիք։ 18 Եւ ասաց տր՟ ած,
ո՛չ է բարւոք մարդոյդ միայն լինել, արասցո՛ւք դմա օգ-
նական ըստ դմա։ 19. Եւ ստեղծ ևս տր՟ ած՟ զա՟մ
գազանս վայրի, և զա՟մ թռչունս երկնից. և ա՛ծ զնոսա
առ ադամ տեսանել զինչ կոչեսցէ զնս՟։ և ա՟մ շնչոյ
կենդանւոյ զինչ և անուանեաց ադամ, ա՛յն անուն է
նր՟։ 20. Եւ կոչեաց ադամ անուանս ա՟մ անասնոց, և
ա՟մ թռչնո՛ց երկնից, և ա՟մ գազանա՛ց վայրի· բայց ադա-
մայ ո՛չ գտաւ օգնական նման նմա։ 21. Եւ արկ տր՟
ած՟ թմբրութի՛ 'ի վր՟ ադամայ, և ննջեաց. և ա՛ռ մի 'ի
կողից նր՟՝ և ելից ընդ այնր մարմին։ 22. և շինեաց
տր՟ ած՟ զկողն զոր ա՛ռ յադամայ 'ի կին, և ած զնա առ
ադամ։ 23. Եւ ասէ ադամ. ա՜յս ա՛յժմիկ ոսկր յոսկե-
րաց իմոց, և մարմին 'ի մարմնոյ իմոյ. սա՛ կոչեսցի կին,
զի յառնէ իւրմէ առաւ։ 24. Վս՟ այնորիկ թողցէ այր
զհայր իւր՝ և զմայր իւր, և երթիցէ զհետ կնոջ իւրոյ։
25. և եղիցին երկուքն 'ի մարմին մի։ Եւ էին եր-
կոքեան մերկ՝ ադա՛մ և կին իւր, և ո՛չ ամաչէին։

CAPUT III.

1. Եւ օձն էր իմաստնագոյն քան զա՟մ գազանս որ
'ի վր՟ երկրի զոր արա՛ր տր՟ ած՟։ և ասէ օձն ցկինն. զի՞
է զի ասաց ած՟ թէ յա՟մ ծառոց որ իցեն 'ի ներքս 'ի
դրախտի այդր՝ մի՛ ուտիցէք։ 2. Եւ ասէ կինն ցօձն.
'ի պտղոյ ծառոց դրախտիդ կերիցուք։ 3. բայց 'ի պտ-
ղոյ ծառոյն, որ է 'ի մէջ դրախտին, ասաց ած՟՝ մի՛ ու-
տիցէք 'ի նմանէ, և մի՛ հուպ լինիցիք՝ զի մի՛ մեռանի-
ցիք։ 4. Եւ ասէ օձն ցկինն. ո՛չ եթէ մահու մեռա-
նիցիք։ 5. զի գիտէր ած թէ յորում աւուր ուտիցէք 'ի

նմանէ. բանայցեն աչք ձեր, և լինիցիք իբրև զաստու-
ածս, ճանաչել զբարի և զչար: 6. Եւ ետես կինն՝ զի
բարի է ծառն 'ի կերակուր, և հաճոյ աչաց հայելոյ,
և գեղեցիկ 'ի տեսանել. և առ 'ի պտղոյ ն՟ր, եկեր,
և ետ առն իւրում ընդ իւր, և կերան: 7. և բացան
աչք երկոցունց, և գիտացին զի մերկ էին. և կարեցին
տերևս թզենւոյ, և արարին իւրեանց սփածանելիս: 8. Եւ
լուան զձայն զգնալոյ տ՟ն ա՟յ 'ի դրախտի անդ՝ ընդ եր-
եկս, և թաքեա՛ն Ադամ և կին իւր յերեսաց տ՟ն ա՟յ՝ 'ի
մէջ ծառոց դրախտին: 9. Եւ կոչեաց տ՟ր ա՟ծ զԱդամ,
և ասէ ցնա. ո՞ւր ես: 10. և ասէ. լուա՛յ զձայն քո 'ի
դրախտի աստ՝ և երկեայ. քանզի մերկ էի և թաքեայ:
11. Եւ ասէ ցնա. ո՞ պատմեաց քեզ թէ մերկ ես. բայց
եթէ 'ի ծառոյն յորմէ պատուիրեցի քեզ՝ անտի ևեթ չուտել,
կերա՞ր արդեւք 'ի նմանէ: 12. Եւ ասէ Ադամ. կինս
զոր ետուր ընդ իս՝ սա՛ ետ ինձ 'ի ծառոյ անտի և կե-
րայ: 13. Եւ ասէ տ՟ր ա՟ծ ցկինն. զի՞նչ գործեցեր զայդ:
և ասէ կինն. օձն խաբեաց զիս, և կերայ: 14. Եւ
ասէ տ՟ր ա՟ծ ցօձն՝ փոխանակ զի արարեր դու զայն, անի-
ծեա՛լ լիջիր դու յամենայն անասնոց և յա՟մ գազանաց
երկրի. 'ի վերայ լանջաց և որովայնի քո գնասցես, և
հո՛ղ կերիցես զա՟մ աւուրս կենաց քոց: 15. և եդից
թշնամութի՟ 'ի մէջ քո և 'ի մէջ կնոջդ, և 'ի մէջ զա-
ւակի քո և 'ի մէջ զաւակի նորա. նա սպասեսցէ քո՛ւմ
գլխոյ, և դու սպասեսցես նորա՛ գարշապարի: 16. Եւ
ցկինն ասէ. բազմացուցանելո՛վ բազմացուցից զտրտմութիւս
քո և զհեծութիւս քո. տրտմութ՟բ ծնցես որդիս. և
առ այր քո դարձ քո, և նա՛ տիրեսցէ քեզ: 17. Եւ
ցԱդամ ասէ. փոխանակ զի լուար ձայնի կնոջդ քոյ, և
կերար 'ի ծառոյ անտի, յորմէ պատուիրեցի քեզ անտի

միայն չուտել, և կերար 'ի նմանէ, անիծեալ լիցի եր-
կիր 'ի գործս քո. տրտմութ՟բ կերիցես զնա զա՟մ աւուրս
կենաց քոց: 18. փուշ և տատասկ բուսուսցէ քեզ. և
կերիցես զբանջար վայրի: 19. քրտամբք երեսաց քոց
կերիցես զհաց քո, մինչև դարձցիս յերկիր ուստի առար.
զի հող էիր և 'ի հող դարձցիս: 20. Եւ կոչեաց ա-
դամ զանուն կնոջ իւրոյ կեանս. զի նա է մայր ա՟մ կեն-
դանեաց: 21. Եւ արար տ՟ր ա՟ծ ադամայ և կնոջ ն՟ր
հանդերձս մաշկեղէնս, և զգեցոյց զն՟ս. 22. Եւ ասէ
տ՟ր ա՟ծ. ահա ադամ եղև իբրև զմի 'ի մէնջ՝ գիտել զբա-
րի և զչար. և արդ գուցէ ձգիցէ զձեռն և առնուցու
'ի ծառոյն կենաց, ուտիցէ և կեցցէ յաւիտեան. 23. Եւ
եհան արձակեաց զնա տ՟ր ա՟ծ 'ի դրախտէ անտի փափ-
կութե՟ն՝ գործել զերկիր ուստի առաւ: 24. Եւ եհան զա-
դամ, և բնակեցոյց յանդիման դրախտին փափկութե՟ն. և
հրամայեաց քերոբէից և բոցեղէն սրոյ շուրջանակաւ
պահել զճանապարհս ծառոյն կենաց:

CAPUT IV.

1. Եմուտ ադամ առ եւայ կին իւր, և յղացաւ և
ծնաւ զկայէն. և ասէ. ստացայ մարդ ա՟վ: 2. Եւ յաւել
ծնանել զեղբայր ն՟ր զհաբէլ. և եղև հաբէլ հովիւ խա-
շանց, և կայէն գործէր զերկիր: 3. Եւ եղև յետ ա-
ւուրց՝ եբեր կայէն 'ի պտղոյ երկրի պատարագ ա՟յ: 4. ած
և հաբէլ յանդրանկաց խաշանց իւրոց և 'ի պարարտաց ն՟ց.
և հայեցաւ ա՟ծ յաբէլ և 'ի պատարագս ն՟ր: 5. և 'ի
կայէն և 'ի զոհս ն՟ր ոչ նայեցաւ. և տրտմեցաւ կայէն
յոյժ, և խոնարհեցան անկան երեսք իւր: 6. Եւ ասէ
տ՟ր ա՟ծ ցկայէն. ընդէ՞ր տրտմեցար, կամ ընդէ՞ր խոնարհե-

ցան անկան երեսք քո։ 7. ո՛չ ապաքէն եթէ ուղի՛ղ
մատուցանես, և ուղիղ ո՛չ բաժանես՝ մեղա՛ր. լո՛ւռ լեր,
առ քե՛զ լիցի դա՛րձ նր̃, և դո՛ւ տիրեսցես նմա։ 8. Եւ
ասէ կայէն ցհաբէլ եղբայր իւր, ե՛կ երթիցուք 'ի դաշտ։
և եղև իբրև չոգան 'ի դաշտ անդր, յարեաւ կայէն 'ի
վերայ աբէլի եղբօր իւրոյ և սպա՛ն զնա։ 9. Եւ ասէ
տ̃ր ա̃ծ ցկայէն. ո՞ւր է հաբէլ եղբայր քո. և նա ասէ՝
չգիտե՛մ. միթէ պահապա՞ն իցեմ եղբօրն իմոյ։ 10. Եւ
ասէ ա̃ծ. զի՞նչ գործեցեր զայդ. գոչումն արեան եղբօր
քո բողոքէ՛ առ իս յերկրէ։ 11. և արդ՝ անիծեա՛լ լի-
ջիր դու 'ի վ̃ր երկրի, որ եբաց զբերան իւր ընդունել
զարիւն եղբօր քոյ 'ի ձեռաց քոց։ 12. զի գործիցես
զերկիր՝ և ո՛չ յաւելցէ տալ քեզ զզօրութի̃ իւր. երեր-
եա՛լ և տատանեալ եղիցես 'ի վ̃ր երկրի։ 13. Եւ ասէ
կայէն ցտ̃ր ա̃ծ. մե՛ծ է պատիժ իմ քան զթողուլդ
զիս։ 14. եթէ հանես զիս այսօր յերեսաց երկրէ,
և յերեսաց քոց թաքեայց. և լինիցիմ երերեալ և
տատանեալ յերկրի. և եղիցի ա̃մ որ գտանիցէ զիս՝
սպանցէ՛ զիս։ 15. Եւ ասէ ցնա տ̃ր ա̃ծ. ո՛չ այդպէս։
ա̃մ որ սպանանէ զկայէն, եւթն վրէժս լուծցէ։ և եդ
տ̃ր ա̃ծ նշա՛ն 'ի կայէն՝ չսպանանե՛լ զնա ա̃մի որ գտանիցէ
զնա։ 16. Եւ ե՛լ կայէն յերեսաց ա̃յ. և բնակեցաւ
յերկրին նայիդ յանդիման եդեմայ։ 17. Եւ մո՛ւտ կայէն
առ կին իւր, և յղացաւ և ծնաւ զենոք։ և շինէ՛ր քա-
ղաք, և դնէ՛ր անուն քաղաքին յանուն որդւոյ իւրոյ ենոքայ։
18. Եւ եղև որդի ենոքայ գայերիդադ։ և գայերիդադ
ծնաւ զմայիէլ։ և մայիէլ ծնաւ զմաթուսաղա։ և մաթու-
սաղա ծնաւ զղամէք։ 19. Եւ ա՛ռ իւր ղամէք երկուս
կանայս. անուն միումն ադդա, և անուն երկրորդին սէլլա։
20. Եւ ծնաւ ադդա զյովբէլ. նա՛ է հայր այնոցիկ որ

բնակեալ են 'ի վրանս խաշնարածաց: 21. Եւ անուն եղբօր նր̅ Յուբաղ: Նա՛ է հայր՝ որ եցոյց զերգս և զքնարս: 22. Եւ սեղլա ծնաւ զԹոբէլ, և էր ճարտարապետ դարբին՝ պղնձոյ և երկաթոյ. և քոյր Թոբելայ Նոյեմա։ 23. Եւ ասէ ղամէք ցկանայս իւր ցադդա և ցսէլլա. լուարո՛ւք ձայնի իմում կանայք ղամեքայ, և ո՛ւնկնդրիք բանից իմոց. զի այր սպանի 'ի վէ՛րս ինձ, և երիտասարդ՝ 'ի հարուածս ինձ։ 24. զի թէ եւթն անգամ վրէժք խնդրեցին 'ի կայենէ. ապա և 'ի ղամեքայ եւթանասնեկին եւթն: 25. Եմո՛ւտ ադամ՝ առ եւայ կին իւր, և յղացաւ և ծնաւ որդի. և անուանեաց զանուն նր̅ սէթ. ասէ: զի յարոյց ինձ ա̅ծ զաւակ ա՛յլ փոխանակ հաբէլի զոր սպանն կայէն։ 26. Եւ սեթայ եղև որդի, և անուանեաց զանուն նր̅ էնո՛վս. Նա յուսացաւ կոչել զանուն տ̅ն ա̅յ։

II. TSCHAMTSCHEAN. Compend. histor. Arm.
Lib. I. cap. 3.

Ժամանակ Արամայ մինչև ցԱնուշաւան:

Արամ որդի Հարմեայ յաջորդեալ 'ի տեղի հօր իւրոյ եղև անուանի յոյժ յաշխ̅ ա̅մ. վ̅ս զի խոհական և արիական գործոց զհետ լեալ՝ արար բ̅զ̅մ քաջութիւնս. և 'ի վ̅ր հայրենեաց խնամարկեալ Ը̅արձակեաց զնոյն 'ի լերանցն Կովկասու մինչև 'ի լերինս Տորոսի՝ վանելով զա̅մ թշնամիս, որք նորոգ սկսեալ էին մուտ առնել յայն աշխ̅, և նեղել զազգն:

Մին 'ի սոցանէ էր՝ Նիւքար իշխանն Մեդացւոց ը̅ս Մարաց՝ այր հպարտ, որ 'ի յետին ժամանակս Հարմեայ հասեալ զօրօք 'ի սահմանս ուրեք Հայոց՝ 'ի հարկի կացուցեալ էր զն̅ա ամս երկուս, և հանդերձեալ էր յարձակել 'ի ներքս: Իսկ Արամայ ժողովեալ 'ի Հայոց արս քաջս և առոյգս,

զալեղնաւորս և զվաղակաւորս իբր յիսուն հազար, և դիմեալ յայն կողմն իւրոյ Տին՝ ուր տիրեալ էր Նխուքար, յաւուր միում յաննկարծակի յառաջ քան զծագել արևու եհաս և անկաւ 'ի վր̃ նր̃. և 'ի դիմի հարեալ սատակեաց զբազմութի̃ ամբոխից նր̃, և կալեալ զնա ինքն զՆխուքար էած յԱրմաւիր. և հրամայեաց ցից երկաթի վարել ը̃ ճակատ նր̃, և վարսել 'ի ծայր աշտարակի պարսպին 'ի տեսիլ անցաւորաց. և զՏն Նխուքարայ ըն̃ մասին կացոյց 'ի հարկի մինչև ցԼեառն Զա-րասպ:

Յետ իբր երից ամաց դիմեաց յՏն Հայոց Բարշամ իշխանն Բաբելացւոց քառասուն հազար հետևակօք և հինգ հազար հեծելազօրօք: Առե̃լ յայնժամ Արամայ զալեղնաւորս և զվաղակաւորս իւր՝ յարձակեցաւ 'ի վր̃ նր̃. և յանակնկալ պահու պատահեալ նմ̃ հալածական արար զզօրս նր̃. և սատակեաց զբզ̃մս 'ի նոցանէ. և կալեալ զԲարշամ սպան զնա:

Խաղաց ապա յարևմուտս 'ի կողմանս Կապադովկացւոց քառասուն հազար հետևակօք, և երկու հազար հեծելովք: Իսկ Պայաբիս իշխան այնոցիկ կողմանց՝ որ 'ի տանէն Քամայ՝ տեսեալ թէ տիրել ունի Արամ սահմանաց իւրոց՝ ել Ը̃դէմ նր̃ սաստիկ պատերազմաւ: Եւ Արամ հասեալ 'ի վր̃ նորա՝ փախստական տարաւ զնա, և էարկ 'ի կղզի ինչ միջերկրական ծովուն (որ թուի լինել Կիպրոս): Եւ ապա դարձ արարեալ 'ի Կապադովկիա՝ եդ անդ մարզպան զմի ոմն յազգէ իւրմէ Մշակ անուն, և տասն հազար զօր ը̃ նմ̃ 'ի վր̃ Տին. և հրամայեաց՝ զի բնակիչք Տին այնորիկ խօսեսցին 'ի լեզու Հայոց. և ինքն գնաց յՏ իւր 'ի Հայս. և անդ ևս եցոյց կրկին բազում գործս քաջութե̃ յայլևայլ սահմանս, և արար բազում ուղղութի̃ս. և այնչափ եղև անուանի, մինչև յա-

նուն ն՟ր կոչել այլոց ազգաց զծ մեր՝ Արմէնիա, և զազգս՝ Արմէն կամ Արմէնի, այսինքն է Արամեան:

Իսկ Մշակ մարզպան (որ 'ի գիրս Յունաց Մոշոք կոչի) շինեաց անդ 'ի Կապադովկիա՝ քաղաք, և պարսպեաց որմովք. և կոչեաց զայն յանուն իւր Մշակ. իսկ բնակիչք տեղւոյն ոչ կարելով ուղիղ արտասանել՝ անուանեցին Մաժակ. որ և յետոյ կոչեցաւ Կեսարիա. այն է Գայսէրի:

Եւ քանզի այն ծ՝ զոր էառ Արամ՝ արտաքոյ է մեծին Հայոց, վ՟նկ կոչեցաւ առաջին Հայք (արտաքոյ մեծի Հայաստանի), և մասնաւոր յորջորջմամբ կոչեցաւ 'ի Յունաց Արմէնիա. և զի Արամ հետ զհետէ էառ և զայլ բազում տեղիս յայնոսիկ կողմանս, և ելից բնակչօք, և ետ ն՟ց խօսել հայերէն, սմին իրի նաև այնոքիկ սահմանք կոչեցան երկ՟րդ Հայք, և եր՟դ Հայք. երեքին 'ի միասին անուանեալ փոքր Հայք: Եւ զի առ երի կայ ն՟ց մին 'ի հնգետասան ծաց մեծին Հայոց առ Եփրատաւ, հայելով առ սոսա կոչեցաւ այն չ՟րդ Հայք: Եւ եղև 'ի թագաւորել Նինոսի յորդւոց անտի Բէլայ 'ի վ՟ր Ասորեստանի տիեզերական իշխանութ՟բ, և 'ի գործել ն՟ր մեծամեծս, տեղեկացեալ 'ի պատմութ՟եց՝ թէ Բէլ նախահաւ իւր սպանեալ իցէ 'ի Հայկայ՝ երկնէր 'ի սրտի առնուլ վրէժ յորդւոյ ն՟ր. որոյ վ՟ն կամեցաւ յարձակիլ 'ի վ՟ր Արամայ. բայց խորհրդով աւագանւոյն նահանջեցաւ՝ զանգիտեալ 'ի համբաւոյ արիական գործոցն Արամայ. խաղաղութ՟բ խօսեցեալ ապա ը՟ նմա՝ անուանեաց զնա երկ՟րդ իւր. և ետ նմա ածել վարսակալ մարգարտեայ, որ յայնմ ժամանակի մեծի փառաց էր նշան: Եւ Արամ պայազատեալ զազգ իւր ամս իբր ծ՟ը վախճանեցաւ. թողեալ զտէրութ՟ի ազգին որդւոյ իւրում Արայի:

Արայ որդի Արամայ՝ որ վ՟ն գեղոյ դիմացն կոչեցաւ գեղեցիկ, պայազատեալ զՀայս՝ պատուեցաւ 'ի Նինոսէ. և

Նորոգ զարդարեաց զգ՟ս Հայոց. յորմէ և գ՟ն այն՝ յորում էր գլխաւոր քաղաքն Արմաւիր, կոչեցաւ Արարատ կամ Այրարատ. յորմէ և բոլոր Հայաստան, ևս և իշխանութին Հայոց անուանեցաւ Այրարատեան: Սա կեցեալ ամս քանի մի՝ ծնաւ զԿարդոս 'ի Նուարդայ կնոջէ իւրմէ:

Եւ եղև 'ի մեռանիլ յաւուրս նր Նինոսի՝ Թագաւորեաց 'ի վր Ասորեստանեայց կին նր Շամիրամ. և սա եղև 'ի կանայս որ Թագաւորեաց զառաջինն: Այս կին գոլով վաւաշոտ՝ լուեալ զգեղեցկութէ Արայի պատգամաւորս յղեաց առ նա՝ գալ և ամուսնանալ ընդ իւր, և Թագաւորել 'ի Նինուէ. և կամ յետ կատարելոյ զկամս իւր դառնալ յետս բազմապատիկ պարգևօք: Եւ զկնի բազում պատգամաւորութեց իբրև ոչ էառ յանձն Արայ զայսպիսի հրաւէր անարժան՝ դիմեաց Շամիրամ 'ի վր նորա պատերազմաւ. այլ հրամայեաց զօրաց իւրոց, զի զգուշասցին Արայի կենդանւոյն ունել զնա:

Եւ Արայ զօրօք ընդդէմ նր. և 'ի խառնել ճակատուցն՝ անկաւ Արայ 'ի մարտի և մեռաւ. պայազատեալ ամս իբր իզ: Լուեալ Շամիրամայ զմահ Արայի շուարեցաւ և սգացաւ. և հրամայեաց գտանել զդի նր, և դնել 'ի տեղի զգուշաւոր. զի գուցէ դիւթութք հնարեսցի կենդանացուցանել զնա: Իսկ զօրք Հայոց զրգռեալ միւսանգամ վրէժխնդիր լինել մահուն Արայի պատրաստեցան ամ զօրութք 'ի պատերազմ ընդդէմ Շամիրամայ: Այլ Շամիրամ իբրև ետես՝ թէ դիւթութք չկարաց յարուցանել զԱրայ, մանաւանդ թէ նեխեցաւ դի նր, հրամայեաց ընկենուլ զնա 'ի վիհ մի մեծ, և ծածկել. և փոխան նր զմի ոմն 'ի հոմանեաց իւրոց զարդարեալ՝ համբաւեաց թէ դիքն լիզեալ զԱրայն յարուցին 'ի կեանս: Յայսմ համբաւոյ զօրք Հայոց հանդարտեալ դադարեցան 'ի պատերազմէ. և Շամիրամ 'ի սէր Արայի զԿարդոս որդի նր՝ որ էր երկոտասան ամաց, անուանեաց Արայ, և կացոյց 'ի

տեղի նորա: Կացեալ Շամիրամայ 'ի Հայս զժամանակ ինչ, և տեսեալ զգեղեցկութիւն երկրին Հայոց, և զմաքրութիւն օդոց, և զգլխաւորս ականակիտ աղբերաց, շինեաց յեզր ծովուն Ըղթամարայ (յարևելից ընդ հարաւակողմն) քաղաք հրաշակերտ. աշխատեցուցեալ յայս գործ երկոտասան հազար գործաւորս և վեց հարիւր ճարտարապետս յամենայն արհեստից. այն է քաղաքն Շամիրամակերտ. որ յետոյ Վան կոչեցաւ. և եղև իբր ամարանոց Շամիրամայ:

Կարդոս՝ որ և Արայ Արայեան կոչեցաւ, յետ միապետելոյ զՀայս ծնաւ զԱնուշաւան. և նուիրեաց զայն 'ի սօսին՝ որ յանտառս սօսեացն Արմենակայ մօտ յԱրմաւիր. զի որ նուիրեալ լինէր 'ի նոսին՝ նոքա համարիւր և դիւցազն. վասն զի կարծէին՝ թէ դիք բնակին 'ի սօսիսն անդ. յայս իսկ և Անուշաւան Սօս կոչեցաւ որ սօսանուէր:

Յայն աւուրսն յարեաւ Նինուաս որդի Շամիրամայ ընդդէմ մօր իւրոյ. և 'ի գրգռել ահեղ պատերազմաց՝ փախեաւ Շամիրամ 'ի Հայս. և միաբանեալ ընդ Կարդոսի յարձակեցաւ 'ի վերայ Նինուասայ. և մեռաւ 'ի մարտի ընդ Կարդոսի 'ի հասակի կբ ամաց. իսկ Կարդոս 'ի հասակի Լ ամաց, պայազատեալ զՀայս ամս իբր ժը:

Անուշաւան որդի Կարդոսի 'ի տղայութեան հասակի՝ գոլով իբր ժդ ամաց՝ անկաւ 'ի ձեռս Նինուասայ, և եկաց յարքունիս նորա իբր գերեալ որդի իշխանի: Նա սակայն յետոյ 'ի զարգանալ իւրում հաճոյացեալ մեծամեծաց վասն անուշութեան բարուցն՝ միջնորդութեամբ նոցա ազատեալ 'ի ձեռաց նորա՝ էառ յինքն զմասն ինչ իւրոյ երկրին՝ խոստանալով տալ նմա հարկս: Նա եղև սա այր բազմահանճար և զօրաւոր. որ և զկնի ժամանակաց գրաւեաց յինքն զերկիր իւր համայն. և արար բազում գործս ուղղութեան. և կեցեալ յետ մահուն Կարդոսի ամս իբր կգ. մեռաւ:

III. Eznikii Refutatio haeresiarum lib. IV. haeresis Marcionis.

Cap. 1. **ՄԱՐԿԻՈ՛Ն** մոլորեալ մուծանէ օտարութիւն ընդդէմ աստուածոյն օրինաց, եդեալ ընդ նմա և զհիւղն էութեամբ, և երիս երկինս։ Ի միոջն, ասէն, բնակեալ է օտարն. և յերկրորդումն օրինացն աստուած. և յերրորդումն զօրք նորա. և յերկրի հիւղն, և կոչեն զնա զօրութիւն երկրի։

Եւ այնպէս կարգէ զաշխարհէ և զարարածոց, որպէս օրէնքն ասեն։ Այլ և յաւելու՝ թէ հաղորդութեամբ ընդ հիւղեայն արար զամենայն զոր արար. և որպէս թէ էգ ոք ինչ և կին ամուսնութ՟ էր հիւղն։ Եւ յետ առնելոյ զաշխարհս ել ինքն զօրօքն հանդերձ յերկինս. և հիւղն և որդիք նր՟ մնացին յերկրի, և կալան զիւրաքանչիւր իշխանութ՟, հիւղն յերկրի, և օրինացն ած՟ յերկինս։

Եւ տեսեալ օրինացն այ՟՝ թէ գեղեցիկ է աշխարհս, խորհեցաւ առնել 'ի սմա մարդ։ Եւ իջեալ առ հիւղն յերկիր, ասէ. տուր ինձ 'ի կաւոյդ քումմէ, և յինէն տամ ոգի, և արասցուք մարդ ըստ նմանութ՟ մերում։ Տուեալ նմա հիւղեայն յերկրէ իւրմէ, ստեղծ զնա և փչեաց 'ի նա ոգի, և եղեւ Ադամ 'ի շունչ կենդանի. և վասն այնորիկ անուանեցաւ Ադամ. զի 'ի կաւոյն արարաւ։ Եւ ստեղծեալ զնա և զամուսինն նորա, և եդեալ 'ի դրախտին՝ որպէս և օրէնքն ասեն, գային հանապազ պատուիրէին նմա, և ուրախ լինէին 'ի նմա իբրև յորդւոջ հասարակաց։

Եւ տեսեալ, ասէ, աստուածոյն օրինաց որ տէրն էր աշխարհի՝ թէ ազնուական է Ադամ և արժանի սպասաւորութեան, հնարեցաւ՝ եթէ զիա՛րդ կարասցէ գողանալ զնա 'ի հիւղեայն, և յիւր կողմն միաբանել։ Առեալ զնա 'ի մի կողմն, ասէ, Ադամ, ես եմ աստուած և չիք այլ ոք. և բայց յինէն այլ աստուած քեզ մի լիցի. ապա թէ ունիցիս զոք այլ աս-

տուածս բայց լինէն, գիտասջիր զի մահու մեռանիցիս: Եւ իբրեւ ասաց զայս ցնա, և յիշատակեաց նմա զանուն մահու, զահի հարեալ Ադամայ՝ սկսաւ տակաւ զանձն մեկնել՚ի հիւղեայն:

Եւ եկեալ հիւղեայն՝ պատուիրել նմա ըստ սովորութն, տեսանէր՝ զի ոչ անսայր նմա Ադամ, այլ խորհեալ՚ի բաց մերժէր, և չմերձենայր առ նա: Յայնժամ հիացեալ՚ի միտս իւր հիւղեայն, իմացաւ՝ թէ տէրն արարածոց նենգեաց նմա: Ասէ. յանկանէ աղբերն պղտորեալ է ջուր նորա. զի՞նչ է այս, չև ևս բազմացեալ Ադամայ ծննդովք, և գողացաւ զնա անուամբ աստուածութեանն իւրոյ լինէն: Որովհետեւ առեաց զիս, և ոչ պահեաց ընդ իս զդաշնն, ես արարից աստուածս բազումս, և լցից նոքօք զաշխարհ գոյիւ իւրով, զի խնդրիցէ թէ ո՞վ իցէ աստուած, և ոչ գտանիցէ:

Եւ արար, ասեն, կուռս բազումս և անուանեաց զնոսա աստուածս, և ելից նոքօք զաշխարհ: Եւ ընկղմեցաւ անուն աստուծոյ, որ տեառնն արարածոց, ՚ի մէջ անուանց բազում աստուածոց, և ոչ ուրեք գտանէր: Եւ մոլորեցաւ ծնունդ նորա նոքօք, և ոչ պաշտէր զնա, զի ձգեաց զամենեսին առ ինքն հիւղն, և ոչ ետ թոյլ և ոչ միում ՚ի նոցանէ պաշտել զնա: Յայնժամ, ասեն, բարկացաւ տէրն արարածոց, զի թողին զնա և անսացին հիւղեայն. և մի ըստ միոջէ, որ ելանէին ՚ի մարմնոց իւրեանց, արկանէր զնոսա առ ցասման ՚ի գեհեն. և զԱդամ արկ ՚ի գեհեն վասն ծառոյն. և այնպէս արկանէր գայր ՚ի գեհեն զամենեսին, մինչև ցքսան և ինն դար:

Եւ տեսեալ, ասեն, աստուծոյն բարւոյ և օտարի, որ նստէր յերրորդ երկինս, թէ այնչափ ազգք կորեան և տանջեցան ՚ի մէջ երկուց նենգաւորաց՝ տեառնն արարածոց և հիւղեայ, ցաւեաց նմա վասն անկելոցն ՚ի հուր և տանջելոց: Առաքեաց զորդի իւր երթալ փրկել զնոսա, և առնուլ զնմանու-

Թիւն ծառայի, և լինել 'ի կերպարանս մարդոյ 'ի մէջ որդւոց աստուծոյ օրինացն: Բժշկեսջիր, ասէ, զբորոտս Նոցա, և կեցուսջիր զմեռեալս Նոցա, և բացջիր զկոյրս Նոցա, և արասջիր 'ի Նոսա բժշկութիւնս մեծամեծս ձրի. մինչ զի տեսանիցէ զքեզ տէրն արարածոց, և Նախանձիցի, և հանիցէ զքեզ 'ի խաչ: Եւ ապա 'ի մեռանելն քում՝ իջցես 'ի դժոխս, և հանցես զնոսա անտի: զի չեն սովոր դժոխք՝ ընդունել 'ի միջի իւրեանց զկեանս: Եւ վասն այնորիկ ելանես 'ի խաչ, զի Նմանեսցիս մեռելոց. և բացցէ դժոխականն զբերանն իւր՝ ընդունել զքեզ. և մտցես 'ի մէջ Նորա, և Թափուր արասցես զնա:

Եւ իբրեւ եհան զնա 'ի խաչ, ասեն, էջ 'ի դժոխսն, և Թափուր արար զնա: Եւ հանեալ զոգիսն 'ի միջոյ Նորա, տարաւ յերրորդ երկինսն առ հայրն իւր: Եւ տէրն արարածոց զայրացեալ, առ ցասմանն էցել զպատմուճանն իւր և զվարագոյր տաճարին իւրոյ. և խաւարեցոյց զարեգակն իւր, և զգեցոյց Թուխս աշխարհին իւրում, և Նստաւ 'ի սուգ առ տրտմութեանն:

Ապա երկրորդ անգամ իջեալ Յեսու կերպարանօք աստուածութեան իւրոյ առ տէրն արարածոց, դնէր դատ ընդ Նմա վասն մահուն իւրոյ: Եւ տեսեալ տեառն աշխարհի զաստուածութիւնն Յեսուայ, գիտաց՝ Թէ գոյ այլ աստուած արտաքոյ քան զնա: Եւ ասէ ցնա Յեսու. դատաստան կայ իմ ընդ քեզ, և մի ոք լիցի դատաւոր 'ի միջի մերում, այլ քո իսկ օրէնքն՝ զոր գրեցեր: Եւ իբրեւ եդին զօրէնսն 'ի միջի, ասէ ցնա Յեսու. ո՞չ դու գրեցեր յօրէնսդ քում՝ Թէ որ սպանանիցէ, մեռցի. և որ հեղու զարիւն արդարոյ, հեղցեն զարիւն Նորա: Եւ ասէ. այո ես գրեցի: Եւ ասէ ցնա Յեսու. արդ տուր զքեզ 'ի ձեռս իմ՝ զի սպանից և հեղից զարիւն քո, որպէս սպաներն դու զիս և հեղեր զարիւն իմ, զի արդար եմ իրաւամբք քան զքեզ, և

երախտիս մեծամեծս արարի յարարածսն քում։ Եւ սկսաւ համարել զերախտիսն, զոր արար յարարածս նորա։

Եւ իբրեւ ետես տէրն արարածոց՝ թէ յաղթեաց նմա, և ոչ գիտէր զի՛նչ խօսիցի, քանզի յիւրոց օրինացն պարտաւորեցաւ, և չգտանէր տալ պատասխանի, զի եղեւ մահապարտ փոխանակ մահուանն նորա, ապա յողոքս անկեալ աղաչէր զնա՝ թէ փոխանակ զի մեղայ և սպանի զքեզ յանգէտս, քանզի ոչ գիտացի թէ աստուած իցես, այլ մարդ համարէի զքեզ, տուեալ քեզ ընդ այնր վրիժուց՝ զամենեսեան որ կամիցին հաւատալ ՚ի քեզ՝ տանել յո՛ և կամիցիս։ Ապա թողեալ զնա Յեսուսյն՝ յափշտակեաց առ զՊաւղոս, և յայտնեաց նմա զգինսն, և առաքեաց զնա քարոզել՝ թէ գնոց գնեալ եմք մեք. և ամենայն որ հաւատայ ՚ի Յեսու՝ վաճառեցաւ յարդարոյ անտի բարւոյն։

Այս սկիզբն է աղանդոյն Մարկիոնայ. թող զայլ բազում թարմատարսն. և զայս ոչ ամենեքին գիտեն, այլ սակաւք ՚ի նոցանէ. և աւանդեն զուսումն միմեանց ՚ի բերանոյ. ասեն, օտարին՝ գնովք գնեալ է զմեզ ՚ի տեառնէն արարածոց, և թէ որպէս կամ իւ գնեալ իցէ, զայն ոչ ամենեքին գիտեն։

Cap. XVI. ՄԱՐԿԻՈ՛ՆՍ այս ՚ի պոնտացւոց աշխարհէ անտի եղեալ էր, որդի եպիսկոպոսի։ Եւ ապականեալ զկոյս մի, գնաց փախստական վասն մերժելոյ զնա յեկեղեցւոյ՝ իւրոյ իսկ հօրն։ Եւ երթեալ ՚ի Հռովմ խնդրել ապաշխարութիւն յայնմ ժամանակին, և չհասեալ այնմ՝ գրգռեցաւ ընդդէմ հաւատոց։ Եւ եդեալ երիս առաջս, ուսուցանէ զբարւոյ և զարդարոյ և զչարէ։ Եւ զնոր կտակարանս օտարոտի համարի ՚ի հնոյն. և յայնմանէ, որ ՚ի նմայն խօսէր, զյարութիւն մարմնոյ արհամարհէ։ Եւ մկրտութիւն ոչ մի

միայն տալ, այլ և երիս յետ յանցանելոյ. և փոխանակ երախայից մեռելոց՝ այլոց ստիպէ առնուլ կնիք: Եւ այնչափ յանդգնեալ՝ մինչեւ կանանց հրամայէ մկրտութիւն տալ, զոր ոչ ոք իշխեաց յայլոց աղանդոցն առնել. ոչ կնիք կրկին և երեքկին տալ, և ոչ զկանայս առ քահանայս ունել:

Նա և նմա իսկ ուստի իցէ քահանայութիւնն, որոյ ապականեալ զկոյս՝ տարագիր եղեւ յեկեղեցւոյ յիւրմէ հօրէ, մինչեւ ապաշխարութեան եւս հասանել ոչ եղեւ արժանի: Եւ յիրաւի չեղեւ արժանի, զի 'ի պատգամս հոգւոյն սրբոյ իշխեաց ձեռն արկանել, զկէսն հատանել ընկենուլ իբրեւ զխոտան, և զկէսն ընտրել առնուլ իբրեւ զպիտոյս: Եւ զայն ոչ գիտէ՛ Թէ յորժամ՛ 'ի մարմնոց մատն մի կտրիցէ առնուցու, զամենայն մարմնոյն իսկ վկայէ՛ սակաւ ինչ մասնն կտրեալ: Առաւել եւս յանդիմանէ զնա կատարիչն օրինաց, որ ասէր՝ Թէ ոչ եկի լուծանել զօրէնս և զմարգարէս, այլ լնուլ զնոսա. և Առաքեալն, որ ասէ՛ Թէ Քրիստոս է խաղաղութիւնն մեր, որ արար զերկոսին 'ի մի: Որում փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն:

IV. Elisei hist. de Vardano et bello Armeniorum lib. II. p 41. sqq. ed. Ven. 828.

ՄԻՀՐՆԵՐՍԵՀ վզուրկ հրամանատար Երան և Աներան, Հայոց մեծաց ողջոյն շատ:

Դուք գիտասջիք, ամենայն մարդ՝ որ բնակեալ է 'ի ներքոյ երկնի, և ոչ ունի զօրէնս դենի մազդեզն, նա խուլ է և կոյր, և դիւաց Հարամանոյ խաբեալ: Քանզի մինչ չեւ էին երկինք և երկիր, Զրուան մեծն աստուած յաշտ առնէր

զհազար ամ, և ասէր. Թերևս լեցի իմ որդի Որմիզդ անուն, արասցէ զերկին և զերկիր։ Եւ յղացաւ երկուս յորովայնի. մի վասն յաշտ առնելոյ, և զմիւսն եւս թերեւսն ասելով։ Իբրեւ գիտաց, եթէ երկու են յորովայնիս, Որ վաղ եկեսցէ, ասէ, նմա տաց զթագաւորութիւնս։ Իսկ որ էր 'ի թերա-հաւատութենէն յղացեալ, պատառեաց զորովայնն և ել 'ի դուրս։ Ասէ ցնա Զրուանն։ Ո՞վ ես դու։ Ասէ. Որդին քո եմ Որմիզդ։ Ասէ ցնա Զրուանն. Իմ որդին լուսաւոր է և անուշահոտ, դու խաւարային ես և չարասէր։ Եւ իբրեւ կարի դառնապէս ելաց, ետ ցնա զթագաւորութիւնն հազար ամ։

Իբրեւ ծնաւ զմիւս եւս որդի, անուանեաց զնա Որմիզդ. եհան զթագաւորութիւնն յԱրհմնէ, և ետ ցՈրմիզդն. և ասէ ցնա. Ցայժմ ես քեզ յաշտ արարի, արդ դու ինձ արա։ Եւ Որմիզդ արար զերկինս և զերկիր. իսկ Արհմն ընդդէմ չար գործեաց։ Եւ այսպէս բաժանին արարածքս. հրեշտակք Որմզդի են, իսկ դեւքն Արհմնոյն. և ամենայն բարիք՝ որ յերկնից և այսր լինին՝ Որմզդի են, և ամենայն վնասք՝ որ անտի և այսր գործին՝ զայն Արհմն արար։ Այնպէս յերկիրս որ ինչ բարի է՝ զայն Որմիզդն արար, և որ ոչն է բարի զայն Արհմն արար. որպէս զմարդ Որմիզդ արար, և զախտս և զհիւանդութիւնս և զմահ Արհմն արար։ Եւ ամենայն թշուառութիւնք և պատահարք՝ որ լինին, և պատերազմունք դառնութեան՝ չարին մասին արարածք են։ Իսկ յաջողութիւնք և տէրութիւնք և փառք և պատիւք և առողջութիւնք մարմնոց, գեղեցկութիւնք դիմաց և ճարտարութիւնք բանից և երկայնակեցութիւնք ամաց, այդ 'ի բարւոյն առնուն զգոյացութիւն. և ամենայն որ ոչ այդպէս է, 'ի նա չարին արարած խառնեալ է։

Եւ ամենայն մարդիկ մոլորեալ են, որ ասեն՝ եթէ զմահ

Աստուած արար, և չար և բարի 'ի նմանէ լինին. մանաւանդ որպէս քրիստոնեայք ասեն, թէ Աստուած նախանձոտ է. վասն թզոյ միոյ ուտելոյ 'ի ծառոյն Աստուած զմահ արար, և զմարդըն արկ ընդ այնու պատուհասիւ։ Զայդպիսի նախանձ և ոչ մարդ առ մարդ ունի, թող թէ Աստուած առ մարդիկ. զի որ զայս ասէ՝ նա խուլ է և կոյր և 'ի դիւաց Հարամանոյ խաբեալ։

Դարձեալ մեւս եւս այլ մոլորութիւն ասեն. Աստուած, ասեն, որ զերկինս և զերկիր արար, եկն և 'ի կնոջէ ումեմնէ ծնաւ, որում անուն էր Մարիամ, և առն նորա Յովսէփ։ Եւ զհետ այսպիսի մարգոյ մոլորեալ են բազումք։ Եթէ աշխարհն Հռոմոց առ յոյժ յիմարութեան ոգիտաբար մոլորեալ են, և զրկեալ են 'ի կատարեալ դենէս մերմէ, յանձանց պարմայեն զվնասն իւրեանց. դուք եւս ընդէ՞ր զհետ նոցա մոլորութեանն ցնորիք։ Այլ զոր օրէնս տէրս ձեր ունի, զնոյն և դուք կալարուք. մանաւանդ զի և առաջի Աստուծոյ վասն ձեր համարս ունիմք տալ։

Մի հաւատայք առաջնորդացն ձերոց, զոր նազրացիս անուանէք, քանզի յոյժ են խաբեբայք. զոր բանիւք ուսուցանեն, գործովք ոչ կարեն յանձն առնուլ։ Միս ուտել ոչ ասեն մեղք, և ինքեանք ուտել ոչ կամին. կին առնել արժան է, բայց ինքեանք և հայել 'ի նա ոչ կամին. կարասի որ ժողովէ, ասեն, մեղք են յոյժ, բայց զաղքատութիւն առաւել քան զյոյժ գովեն. յարգեն զթշուառութիւն, և պարսաւեն զյաջողուածս. ծաղր առնեն զանուն բախտի, և զփառաւորութիւն յոյժ այպանեն. սիրեն զանշքութիւն հանդերձից, և յարգեն զանարգս քան զպատուականս. գովեն զմահ, և պարսաւեն զկեանս. անարգեն զծնունդս մարդոյ, և գովեն զանորդութիւն։ Եւ եթէ լսէ ոք դոցա և 'ի կանայս ոչ մերձենան, աշխարհի վախճան վաղվաղակի հասանէ։

Այլ ես ոչ կամեցայ զամենայն ըստ մասանց ընդ գրով արկանել առ ձեզ. զի բազում այն ինչ է, զոր խօսին դոքա: Որ չարագոյն եւս է քան զոր գրեցաքդ, զԱստուած 'ի խաչ ելեալ 'ի մարդկանէ քարոզեն, և զնոյն մեռեալ և թաղեալ, և ապա յարուցեալ և վերացեալ յերկինս: Ո՞չ ահա ձեզէն իսկ արժան էր անդրէն դատաստան առնել վասն այդպիսի անարժան ուսմանց: Դեւք որ չարք են, ոչ ըմբռնին և տանջին 'ի մարդկանէ, թող թէ Աստուած արարիչ ամենայն արարածոց. զոր ձեզ ամօթ է ասել, և մեզ կարի անհաւատալի բանք:

Արդ երկու իրք կան առաջի ձեր. կամ արարէք բան առ բան նամակիդ պատասխանի, և կամ արիք 'ի դուռն եկայք, և յանդիման լերուք մեծի հրապարակին:

V. MOSIS CHORENENSIS hist. Armeniorum lib. I. Cap. 10.

Յաղագս ապստամբութեանն Հայկայ.

Այս, ասէ, (ք Մար Աբաս Կատինայ) Հայկ գեղապատշաճ և անձնեայ, քաջագանգուր, խայտակն և հաստաբազուկ. սա 'ի մէջ սկայիցն քաջ և երեւելի լեալ, ընդդիմակաց ամենեցուն, որք ամբառնային զձեռն՝ միապետել 'ի վերայ ամենայն սկայիցն և դիւցազանց: Սա խրոխտացեալ ամբարձ զձեռն ընդդէմ բռնաւորութեանն Բելայ, 'ի տարածանել ազգի մարդկան ընդ լայնութիւն ամենայն երկրի 'ի մէջ բազմակոյտ սկայիցն, անհուն խօլաց և ուժաւորաց: Զանզի անդ մոլեգնեալ այր իւրաքանչիւր սուր 'ի կող ընկերի իւրոյ ձգելով, ջանային տիրել 'ի վերայ միմեանց. ուր պատահմունք 'ի դէպ ելանէին Բելայ՝ բռնանալ ունել զամենայն երկիր:

Որում ոչ կամեցեալ Հայկայ՝ հնազանդ լինել Բելայ, յետ ծնանելոյ զորդի իւր զԱրմենակ 'ի Բաբելոնի, չու արարեալ գնայ յերկիրն Արարադայ, որ է 'ի կողմանս հիւսիսոյ, հանդերձ որդւովք իւրովք և դստերօք և որդւոց որդւովք, արամբք զօրաւորօք՝ թուով իբրեւ երեքհարիւր, և այլովք ընդոծնօք, և եկօք յարեցելովք 'ի նա, և բոլոր աղխիւ: Երթեալ բնակէ 'ի լեռնոտին միում 'ի դաշտավայրի, յորում սակաւք 'ի մարդկանէ յառաջագոյն ցրուելոցն դադարեալ բնակէին. զորս հնազանդ իւր արարեալ Հայկ, շինէ անդ տուն բնակութեան կալուածոց, և տայ 'ի ժառանգութիւն Կադմեայ որդւոյ Արմենեկայ: Այս արդարացուցանէ զանգիր հին ասացեալ զրոյցս:

Եւ ինքն խաղայ, ասէ, այլով աղխիւն ընդ արեւմուտս հիւսիսոյ, գայ բնակէ 'ի բարձրաւանդակ դաշտի միում. և անուանէ զանուն լեռնադաշտակին Հարք. այս ինքն, աստէն բնակեալքս՝ ազգի տանն Թորգոմայ: Շինէ և գիւղ մի, և անուանէ յիւր անուն Հայկաշէն: Յիշէ և աստանօր պատմութիւնս. հարաւոյ կողմանէ դաշտիս այսորիկ առ երկայնանստիւ միով լերամբ բնակեալ յառաջագոյն արք սակաւք՝ ինքնակամ հնազանդեալ դիւցազինն: Արդարացուցանէ և այս զասացեալ զրոյցս անգիրս:

VI. FAUSI BYZANTINI hist. Armeniorum lib. V. cap. 7.

Յաղագս մահուան Արշակայ թագաւորին Հայոց, թէ զիա՛րդ մեռաւ յերկրին խուժաստանի յԱնդմըշն բերդին ինքն ինքեամբ ձեռօք, և Դրաստամատն էր պատճառք մահուն:

Այլ յայնմ ժամանակի դեռ. տակաւին եւս կայր կենդանի Արշակ արքայ Հայոց յերկրին իշխանութեն Թագաւորութեն Պարսից 'ի կողմանս խուժաստանի յԱնդմըշն բերդին. այս ինքն որ անուն Անյուշն բերդն կոչեն: Եւ զայնու ժամանակաւ խաղաղացաւ պատերազմ տալ Պարսից ընդ Հայս. զի արշակունին Թագաւորն Քուշանաց, որ նստէր 'ի Բաղխ քաղաքի, նա յարոյց տալ պատերազմ ընդ սասանականին Շապհոյ և Թագաւորին Պարսից: Եւ Շապուհ Թագաւորն զամ զզօրսն Պարսից գումարեալ խաղացոյց տալ պատերազմ ընդ նմա, և զօրս միանգամ ածեալ էր գերութիւն յերկրէն Հայոց զամ այրուձի գումարեալ՝ խաղացոյց ընդ ինքեան. և զներքինին անգամ Թագաւորին Հայոց Արշակայ տանէր ընդ ինքեան 'ի գործ պատերազմին:

Եւ էր ներքինի մի Հայոց Թագաւորին Արշակայ, ոստիկան հաւատարիմ լեալ, ներքինի սիրելի մեծի իշխանութեն և մեծի պատուի, և անուն Դրաստամատ: Իսկ իբրեւ եղև պատերազմ ընգ Թագաւորին Քուշանաց և ընդ Թագաւորին Պարսից, չարաչար տարածէին զզօրսն Պարսից զօրքն Քուշանաց, և զբազումս կոտորեցին 'ի զօրացն Պարսից զօրքն Քուշանաց, և զբազումս ձերբակալ արարին, և զկէս փախստականս հալածական առնէին: Իսկ Դրստամատն ներքինին, որ յաւուրս Տիրանայ Թագաւորին Հայոց և Արշակայ որդւոյ նորա Թագաւորին Հայոց լեալ էր իշխան տան գաւառին և հաւատարիմ գանձուց Անգեղ բերդին, և ամ բերդացն արքունի՝ որ 'ի կողմանս յայնս. սոյնպէս և յերկրին Ծոփաց 'ի Բնաբեղ բերդին գանձքն լեալ էին ընդ նովաւ, և բարձ նորա ի վեր քան զամ նախարարացն: Եւ քանզի այս գործակալութի և մարդպետութի, որում հայրն կոչէին ներքինեաց՝ գործ լեալ էր 'ի բնէ ժամանակաց 'ի Թագաւորութեն արշակունոյ, և զայս Դրաստամատն ներքինի զիշխանն զԱնձեղ տանն գե-

ըեալ տարեալ էր յերկիրն Պարսից 'ի ժամանակին՝ յորժամ կալան զԱրշակ արքայն Հայոց:

Եւ այս Դրաստամատ էր յայնմ ճակատու, յորում վատթարեցին Քուշանքն զՇապուհ արքայն Պարսից: Եւ Դրաստամատ գործեաց անհնարին քաջութիւն այնչափ կռուել ես 'ի վերայ Շապհոյ արքային, և ապրեցոյց զնա 'ի մահուանէ. և բազումս 'ի Քուշանաց անտի կոտորեաց, և զբազում զախոյանից զգլուխս բերէր զառաջեաւ: Եւ զՇապուհ թագաւորն Պարսից փրկէր 'ի նեղութէն պատերազմին թշնամեաց անտի, ուր արգելին զնա 'ի խուռն պատերազմին 'ի զօրաց անտի: Իսկ իբրև եղև յորժամ դարձաւ Շապուհ թագաւորն Պարսից յերկիրն Ասորեստանի, և մեծ շնորհակալութիւն առնէր ներքինւոյն Դրաստամատայն վաստակոցն, և ասէր ցնա Շապուհ թագաւորն Պարսից. խնդրեա դու ինչ յինէն. զինչ և խնդրեսցես, տաց քեզ և ոչ արգելից: Եւ ասէ Դրաստամատ ցթագաւորն. Ինձ 'ի քէն այլ ինչ ոչ պիտի, բայց տուր ինձ հրաման, զի երթայց տեսից զբնակ տէրն իմ զԱրշակ արքայ Հայոց: Եւ առ մի օր, իբրև ես երթայց առ նա, հրաման տուր՝ արձակել զնա 'ի կապանացն, և ես իշխեցից լուանալ զգլուխ նորա և օծանել, և ագուցանել նմա պատմուճան, և արկանել նմա բազմականս, և դնել առաջի նորա խորտիկս, և տալ նմա գինի, և ուրախ առնել զնա արուեստականօքն մի օր ճիշդ: Եւ ասէ թագաւորն Շապուհ. Խիստ են խնդրուածքդ, զոր խնդրեցերդ. զի յաւուրց ժամանակաց՝ յորմէ թագաւորութիւս Պարսից կանկնեալ է, և բերդն այն Անյուշ բերդ կոչեցեալ է, չիք ոք մարդ եղեալ 'ի մարդկանէ՝ որ իշխեցեալ է յիշեցուցանել թագաւորաց զոր յայնմ բերդի եդեալ զոք է թագաւորաց՝ յիշելով զայն մարդ՝ որ յայնմ բերդի զոք եդեալ է, թող թէ զնա զայր թագաւոր և զիմ ընկեր կապեալ եդեալ յայնմ բերդի զհակառակորդն.

քան մինչ աշխատ արարեր զմեզ, և դու աւաղէիկ զանձն 'ի մահ եդիր և յիշեցուցեր զԱնյուշն, որ ոչ էին լեալ երբէք օրէնք Թագաւորութեան Արեաց 'ի սկզբանէ: Բայց զի վասն քո մեծ վաստակք են առ իս, զոր ինչ խնդրեցերն՝ երթ՝ տուեալ լիցի քեզ. բայց քեզ արժան էր զօգուտ քո անձինդ խնդրել կամ աշխարհս կամ գաւառս կամ գանձս: Բայց յորժամ դու զայդ խնդրեցեր, անցեալ լիցիս զօրինօք Արեաց Թագաւորութեանս. երթ, տուեալ լիցի քեզ որ ինչ յինէնս խնդրեցեր փոխանակաց քոց:

Եւ ետ նմա փուշտիպան մի հաւատարիմ. և հրովարտակ՝ արքունի մատանեաւն, զի գնացեալ երթիցէ նա 'ի բերդն յԱնդմըշն, և զհարդ և կամք լցէ նորա, զոր օրինակ և խնդրեացն՝ արասցէ կապելոյն Արշակայ, որ յառաջ Թագաւորեալն էր 'ի Հայս: Եւ չոգաւ Դրաստամատն հանդերձ փշտիպանաւն և հրովարտակաւն արքունի յԱնուշ բերդն, և ետես զտէրն իւր, և արձակեաց զԱրշակ 'ի կապանացն երկաթեաց 'ի ձեռակապացն և յոտիցն երկաթոց և յանրոց պարանոցէն շղթայիցն սարեացն. և լուաց զգլուխ նորա, և լոգացոյց զանձն նորա: Եւ ագոյց նմա պատմուճան ազնիւ. և էարկ նմա բազմականս և բազմեցոյց զնա. և եդ առաջի նորա ընթրիս ըստ օրինաց Թագաւորաց և եդ առաջի նորա գինի որպէս օրէն էր Թագաւորացն. սթափեաց զնա, և մխիթարեաց, և ուրախ առնէր զնա գուսանօք:

Եւ 'ի ժամ աղանդեր մատուցանելոյ՝ եդին առաջի նորա միրգ, խնձոր և վարունգ և ամիճ, զի կերիցէ. և եդին դանակ նմա, որպէս զի հատցէ և կերիցէ զհարդ ե կամեացն: Եւ Դրաստամատ մեծապէս ուրախ առնէր զնա. կայր յոտն, և մխիթարէր զնա: Իսկ յորժամ արբեցաւ, և գինին եկն զակամբ նորա, արբեցաւ հպարտացաւ և ասէ. Վա՜յ ինձ Արշակայ. այսպէս և այս, և յայսմ չափու և այս անցք անցին ընդ

խս ։ Եւ զայս ասացեալ, զդանակն՝ զոր ունէր 'ի ձեռինն, որով զմիրգն կամ զամիճն կամէր ուտել, եհար 'ի սրտի իւրում։ և անդէն սատակեցաւ, և մեռաւ անդէն 'ի նմին ժամուն մինչ դեռ կայր 'ի բազմականին։ Իսկ յորժամ զայն ետես Պրաստամատն, յարձակեցաւ եհան 'ի նմանէ զնոյն դանակ, և եհար յիւրում կշտին. և անդէն մեռաւ և նա 'ի նմին ժամուն յայնմ։

IOANNIS MANDACUNENSIS sermones. ed. Ven. 836. p. 209. sq. de amore.

